ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի
ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

«18» հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասի պահանջներով.
Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Էջմիածին համայնքի 2021թ. հունվարի 18-ի արտահերթ թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Ղազարյան Գևորգ			
2.	Զաքարյան Սերգեյ				6.	Մելիքյան Ներսես			
3.	Խաչատրյան Թովմաս				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Հայրապետյան Վարուժան				8.	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Էջմիածին համայնքի ավագանու
2021 թվականի հունվարի 18-ի
Արտահերթ թիվ 1 նիստի թիվ 1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 122 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 120 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ն

«18» հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 - Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «<Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության 13.01.2021թ. թիվ 27.3/398-21 գրությունը

Համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի հաստատման մասին» թիվ 133-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				5.	Ղազարյան Գևորգ			
2.	Զաքարյան Սերգեյ				6.	Մելիքյան Ներսես			
3.	Խաչատրյան Թովմաս				7.	Միրզոյան Արամայիս			
4.	Հայրապետյան Կարուժան				8.	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի էջմիածին համայնքի
ավագանու 18 հունվարի 2021թ.
թիվ 2 - Ն որոշմամբ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 1 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բյուջեի եկամուտներ՝ հատված 1

Հազար դրամ

No	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021թ. ծրագիր
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1773199.3
1	*ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	420000,0
1,1	Հողի հարկ	70000,0
1,2	Գույքահարկ /շենքերից և փոխադրամիջոցներից/	350000,0
2	*ՏՈՒՐՔԵՐ*	68476,5
2,1	Պետական տուրքեր	28000,0
2,2	Տեղական տուրքեր	40476,5
3	*ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	335816,5
3,1	Գույքի և հողի վարձակալու- թյունից եկամուտներ	29500,0
3,2	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից վարչական պատասխանատ վության միջոցների կիրառումից եկամուտներ	3606,0
3,3	Տեղական վճարներ	287710,5
3,4	Այլ ոչ հարկային եկամուտներ	15000,0
5	*ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ*	948906.3
5,1	Դոտացիա	783962,9
5,2	Այլ դոտացիա	
5,3	Այլ ընթացիկ դրամաշնորհ /զինծառայողներ/	2370,0
5,4	Փոխատվություններ /սուբվ./	4900,8
5,5	Պատվիրակ. լիազոր. իրական. համար ստացվող միջ.	7473,3
5,6	Միջազգային կազմակերպություն	
5,7	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	150199.3
6	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 2 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2

Հազար դրամ

No	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021թ. ծրագիր

	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1920434.0
1	*ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*	234453.9
1,1	Տեղական ինքնակառավարում	226980.6
1,2	Ընդհանուր բնույթի համայն քային այլ ծառայություններ	7473,3
2	*ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ*	583700,0
2,1	Նախադպրոցական դաստիրակություն	405600,0
2,2	Արտադպրոցական կրթություն	178100,0
3	*ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑ ԱՊԱՀՈՎ.*	22500,0
4	*ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ*	171800,0
4,1	Գրադարաններ	34000,0
4,2	Մշակույթի տներ	32400,0
4,3	Թանգարաններ	20600,0
4,4	Սպորտ	61700,0
4,5	Այլ ծրագրեր	23100,0
5	*ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*	537915.9
6	*ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	-101000,0
7	*ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍԿՈՂ ԾԱԽՍԵՐ*	471064.2
7,1	Կապիտալ տրանֆերտ	150199.3
7,2	Միջազգային կազմակերպություն	
7,3	Այլ ծրագրեր /ֆոնդ. բյուջե/	233864.9
7,4	Վարչական մասի պահուստային ֆոնդ	87000,0

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3

Հազար դրամ

No	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021 թ ծրագիր
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1920434.0
Ա	*Ընթացիկ ծախսեր*	1637369.8
	Աշխատավարձ	453536,0
	Էներգետիկ ծառայություններ	75040.1
	Կոմունալ ծառայություններ	300,0
	Կապի ծառայություններ	4130,0
	Ապահովագրական ծախսեր	5460.0
	Գույքի և սարք. վարձակ.	2000,0
	Ներքին գործուղումներ	500,0

	Արտասահմանյան գործուղում	1000,0
	Համակարգչային ծառայություն	1000,0
	Տեղեկատվական ծառայություններ	1000,0
	Ներկայացուցչական ծախսեր	1500,0
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	41100,0
	Մասնագիտական ծառայություն	1000,0
	Շենք. և կառույց. ընթաց. նորոգ.	72000,0
	Մեք. և սարք. ընթ. նորոգում.	5500,0
	Գրասենյակային նյութեր և հագուստ	9214,0
	Տրանսպորտային նյութեր	75333.8
	Առողջապահական և լաբորատոր նյութեր	500,0
	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1200,0
	Հատուկ նպատակային այլ նյութեր	35985.9
	Սոց. օգնության նպաստներ բյուջեից	24870,0
	Սուբսիդիաներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	732400,0
	Ընթացիկ դրամաշնորհներ միջազ. կազմակերպություններին	500,0
	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	800,0
	Այլ կապիտալ դրամաշնորհներ	
	Այլ հարկեր	2500,0
	Քաղաքացիական պաշտպանություն	2000,0
	Պահուստային ֆոնդ	87000,0
Բ	*Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր*	384064.2
	Նախագծահետազոտական ծախսեր	12437.0
	Շենք. շինությ. կապ. նորոգ.	313627.2
	Տրանսպորտային սարքեր	15000.0
	Վարչական սարքավորումներ	43000.0
	Այլ մեքեն. և սարքավորումներ	
	Պահուստային ֆոնդ	
Գ	*Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր*	-101000,0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-11000,0
	Հողի իրացումից մուտքեր	-90000,0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	
	Կապիտալ տրանֆերտ	
	Միջազգային կազմակերպ. մուտքեր	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էջմիածին համայնքի ավագանու «Էջմիածին համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի որոշումը կատարելու, բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը և բյուջեի վարչական մասում առաջացած նախորդ տարվա ընթացքում կատարված, սակայն չֆինանսավորված պարտավորությունները /նախորդ տարվա պարտքերը/ կատարելու համար Էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. 2020թ. բյուջետային տարին եզրափակելուց հետո 2021թ. հունվարի 1-ի դրությամբ Էջմիածին քաղաքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 147234.6 հազ. դրամ, որից վարչական մասում՝ 111747.1 հազ. դրամ, ֆոնդային մասում 35487.5 հազ. դրամ:

1.1. Բյուջեի վարչական մասում առաջացել է նախորդ տարվա ընթացքում կատարված, սակայն չֆինանսավորված պարտավորություններ /նախորդ տարվա պարտքեր/ 14369.7 հազ. դրամ:

1.2. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածին /հոդ. 4212/ 1880.2 հազ. դրամ, <Տրանսպորտային նյութեր> հոդվածին /հոդ. 4264/ 143.1 հազ. դրամ և <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածին /հոդ. 4269/ 485.9 հազ. դրամ:

1.3. Աղբահանան /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածին /հոդ. 4212/ 38.0 հազ. դրամ, <Ապահովագրական ծախսեր> հոդվածին /հոդ. 4215/ 960.0 հազ. դրամ և <Տրանսպորտային նյութեր> հոդվածին /հոդ. 4264/ 4685.8 հազ. դրամ:

1.4. Համայնքային զարգացան /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Տրանսպորտային նյութեր> հոդվածին /հոդ. 4264/ 504.8 հազ. դրամ:

1.5. Փողոցների լուսավորման /բաժին 06, խումբ 4, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածին /հոդ. 4212/ 5671.9 հազ. դրամ:

1.6. Վարչական մասում նախորդ տարվա պարտքերի մարմանն ուղղելուց հետո տարեսկզբի ազատ մնացորդի տարբերությունը 97377.4 հազ. դրամը տեղափոխել ֆոնդային մաս և 2021թ. վարչական բյուջեի ծախսերը հաստատել 1637369.7 հազ. դրամ:

1.7. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սուբվենցիայի հատկացման նպատակով.

2.1. Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների <Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)> 1261 տողը 150199.3 հազ. դրամ:

2.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սուբվենցիայի հատկացման 150199.3 հազ. դրամը, վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի տարբերության 97377.4 հազ. դրամը, ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի 35487.5 հազ. դրամը, Ֆոնդային մասում ֆինանսական ակտիվների 101000.0 հազ. դրամը 2021թ. Ֆոնդային մասի ծախսերը հաստատել 384064.2 հազ. դրամ և ուղղել.

3.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 10000.0 հազ. դրամ, <Տրանսպորտային սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5121/ 5000.0 հազ. դրամ և <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 5000.0 հազ. դրամ:

3.2. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 267627.2 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածին /հոդ. 5134/ 10437.0 հազ. դրամ:

3.3. Արբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 5000.0 հազ. դրամ, <Տրանսպորտային սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5121/ 10000.0 հազ. դրամ և <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 15000.0 հազ. դրամ:

3.4. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 5000.0 հազ. դրամ, <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 5000.0 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածին /հոդ. 5134/ 1000.0 հազ. դրամ:

3.5. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 10000.0 հազ. դրամ, <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 3000.0 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածին /հոդ. 5134/ 1000.0 հազ. դրամ:

3.6. Հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 1000.0 հազ. դրամ:

3.7. Գրադարանների /բաժին 08, խումբ 2, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 1000.0 հազ. դրամ:

3.8. Թանգարաններ և ցուցասրահների /բաժին 08, խումբ 2, դաս 2/ <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 1000.0 հազ. դրամ:

3.9. Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների /բաժին 08, խումբ 2, դաս 3/ <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 1000.0 հազ. դրամ:

4.0. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 16000.0 հազ. դրամ և <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 8000.0 հազ. դրամ:

4.1. Արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 3000.0 հազ. դրամ:

4.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ 27.3/398-21
«13» 01 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գասպարյան

Ի պատասխան Ձեր 2021 թվականի հունվարի 11-ի թիվ 6 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

1/13/2021

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-116

արադատության
նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծից (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտ է հանել «ՆԻՍՏ ԹԻՎ 1» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:

2. Նախագծի 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ անհրաժեշտ է հանել «և նշված որոշմամբ հաստատված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատվածների» բառերը:

3. Նախագծի Հավելվածից (այսուհետ՝ Հավելված) անհրաժեշտ է հանել «ՆԱԽԱԳԻԾ» բառը: Բացի այդ, Հավելվածի գլխագիրը նշված չէ:

4. Հավելվածում «ՀԱՏՎԱԾԸ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

1/13/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

«18» հունվարի 2021թ

ք.Էջմիածին

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 27.09.2020 թվականի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» 1586-Ն որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օգտագործված ավտոմեքենաների ձեռք բերումը գնանշման հարցում իրականացնելու միջոցով առաջացնելու է բարձր ռիսկայնություն տեխնիկական պայմանների ապահովման առումով, քանի որ դրանց համար երաշխիք չի կարող տրամադրվել.

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Էջմիածնի համանքապետարանին մեկ անձից գնման եղանակով ձեռք բերել թվով երկու Նիսան (NISSAN X-TRAIL) մակնիշի, 2003-ից 2006 թվականների արտադրության և թվով 1 Տոյոտա (TOYOTA ESTIMA) մանիշի, 2007-ից 2009 թվականների արտադրության օգտագործված ավտոմեքենաներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա			
2.	Զաքարյան Սերգեյ			
3.	Խաչատրյան Թովմաս			
4.	Հայրապետյան Վարուժան			
5.	Ղազարյան Գևորգ			
6.	Մելիքյան Ներսես			
7.	Միրզոյան Արամայիս			
8.	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ն

«18» հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով, 219.1-րդ և 255-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության 18.12.2020թ. թիվ 06/27.2/28658-20 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի Ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 12-ի «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման, վարչական իրավախախտումների վերաբերյալ անհրաժեշտ գործողությունների իրականացման կարգը և արձանագրության ձևը հաստատելու մասին» թիվ 38-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				6.	Ղազարյան Գևորգ			
2.	Գրիգորյան Վարդան				7.	Մելիքյան Ներսես			
3.	Զաքարյան Սերգեյ				8.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				9.	Մովսիսյան Կարեն			
5.	Հայրապետյան Վարուժան								

…… .. ……ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ …… Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ… …… …… …… ……. ….

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 12 հունիսի 2015 թվականի թիվ 38-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման և նշված որոշմամբ հաստատման ներկայացվող հավելվածի փոփոխությունների նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է առաջին հերթին համայնքի հիգիենիկ մթնոլորտի, սանիտարական նորմերի ու պահանջների պահպանման սկզբունքներով, բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության մասին մտահոգությամբ և իհարկե կարգազանց անձանց պատասխանատվության ենթարկելու հանգամանքով:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մայթերին տեղեդրված փոքր աղբամաններում կուտակվել է ոչ համաչափ ծավալի աղբ, ինչն իր հերթին նաև չտեղավորվելով աղբամանների մեջ թափվել է աղբամանների շուրջ, ուստի առաջացել է անհրաժեշտություն համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների համար սահմանել կանոներ նշված աղբամանները շահագործելու համար:

..... ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ..... Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ .....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/24.2/28658-20
«18» 12 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գասպարյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 4280 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 12 հունիսի 2015 թվականի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

12/18/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Մարտիրոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-127

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 12 հունիսի 2015 թվականի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Ներկայացված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 12 հունիսի 2015 թվականի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 12-ի թիվ 38-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ:

Նախագծի նախաբանում որպես ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման լիազորող նորմեր նշված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19.1-րդ կետը, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերը, 219.1-րդ և 255-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ կարգավորումներին.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. (...) Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր:

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման լիազորությունը պետք է բխի Սահմանադրությունից և հստակորեն նախատեսված լինի օրենքով:

Տվյալ պարագայում Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 12-ի թիվ 38-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ դրանով սահմանելով իրավախախտման հայտաբերելուն ուղղված գործողությունների իրականացման կարգին առնչվող իրավակարգավորումներ, մինչդեռ ոչ «Տեղական ինքնակառավարման մասին», ոչ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքներով և ոչ էլ Նախաբանում նշված այլ նորմատիվ իրավական ակտերով վարչական իրավախախտումների հայտնաբերմանն ուղղված գործողությունների իրականացման կարգը սահմանելու իրավասություն համայնքի ավագանուն վերապահված չէ:

Այս առումով Նախագծով նախատեսված կարգավորումները անհրաժեշտ է դիտարկել << Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսված պահանջների համատեքստում և Նախագծով նախատեսել միայն այնպիսի կարգավորումներ, որոնք բխում են լիազորող նորմերի շրջանակից:

Միևնույն ժամանակ, Նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

1. Նախագծի վերնագրում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը նշելիս անհրաժեշտ է դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառել այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

2. Նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագի 1-ին կետով առաջարկվում է կատարել միայն մեկ փոփոխություն, այն է՝ ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 12-ի թիվ 38-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ:

3. Նախագծի նախաբանում հղում է կատարվում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19.1-ին կետին, մինչդեռ նշված օրենքի 16-րդ հոդվածում նման կետ առկա չէ:

4. Նախագծի 1-ին կետում «6-րդ գլխի մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «6-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ» բառերով:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

12/18/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5

«18» հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով 01.01.2021 թ-ին ուժի մեջ մտած «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման նպատակով հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման նոր կարգով սահմանված կադաստրային արժեքի էական տարբերությունները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Էջմիածին քաղաքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 21-ի «Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին» թիվ 121 որոշման երկրորդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «100%» բառի փոխարեն կարդալ «250%» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				6.	Ղազարյան Գևորգ			
2.	Գրիգորյան Վարդան				7.	Մելիքյան Ներսես			
3.	Զաքարյան Սերգեյ				8.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				9.	Մովսիսյան Կարեն			
5.	Հայրապետյան Վարուժան								

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6

«18» հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 122 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով 01.01.2021 թ-ին ուժի մեջ մտած «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման նպատակով հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման նոր կարգով սահմանված կադաստրային արժեքի էական տարբերությունները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Էջմիածին քաղաքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 21-ի «Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին» թիվ 122 որոշման երկրորդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «100%» բառի փոխարեն կարդալ «250%» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				6.	Ղազարյան Գևորգ			
2.	Գրիգորյան Վարդան				7.	Մելիքյան Ներսես			
3.	Զաքարյան Սերգեյ				8.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				9.	Մովսիսյան Կարեն			
5.	Հայրապետյան Վարուժան								

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7

«18» հունվարի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի «ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 120 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով 01.01.2021 թ-ին ուժի մեջ մտած «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման նպատակով հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման նոր կարգով սահմանված կադաստրային արժեքի էական տարբերությունները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Էջմիածին քաղաքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 21-ի «Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին» թիվ 120 որոշման երկրորդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «100%» բառի փոխարեն կարդալ «200%» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրաչյա				6.	Ղազարյան Գևորգ			
2.	Գրիգորյան Վարդան				7.	Մելիքյան Ներսես			
3.	Զաքարյան Սերգեյ				8.	Միրզոյան Արամայիս			
4.	Խաչատրյան Թովմաս				9.	Մովսիսյան Կարեն			
5.	Հայրապետյան Վարուժան								

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ